

1. Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքը և բնական պայմանները

Հայաստանի Հանրապետության տարածքը գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս արևելյան հատվածում՝ զբաղեցնելով վերջինիս մոտ 10%-ը, Կուր-Արաքսյան լեռնային միջագետքի մեծ մասը՝ տարածված Կովկասյան պարանոցի հարավում:

ՀՀ տարածքը գտնվում է հյուսիսային լայնության 38°50'-41°18' և արևելյան երկայնության 43°27'-46°37' միջև: Հայաստանի Հանրապետության մակերեսը կազմում է 29.74 հազ.քառ. կմ (2974259 հա): Հայաստանի տարածքը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ունի մոտ 400 կմ ձգվածություն, իսկ առավել լայնությունն արևմուտքից արևելք կազմում է 200 կմ, հարավ-արևելքում այն առաջացնում է մի ելուստ (Ջանգեզուրը), որի ամենամեղ մասի լայնությունը կազմում է ընդամենը 26 կմ:

Հայաստանի պետական սահմանի երկարությունը կազմում է մոտ 1479 կմ: Հյուսիսից այն սահմանակից է Վրաստանին, հյուսիս-արևելքից, արևելքից և հարավ-արևմուտքից՝ Ադրբեջանին, հարավից՝ Իրանին, արևմուտքից՝ Թուրքիային:

ՀՀ տարածքը, ինչպես նաև ամբողջ Հայկական լեռնաշխարհը, որպես լեռնային երկիր, ձևավորվել է սկսած վաղ երկրաբանական ժամանակներից՝ երրորդական և չորրորդական ժամանակահատվածներում, կայնոզոյում, մասնավորապես նորագույն տեկտոնական էտապում՝ միոցենից հետո: Ռելիեֆի ձևավորման մեջ սկզբնական շրջանում վճռական դերը կատարել են լեռնակազմական և վերջինիս հետ սերտորեն կապված հրաբխային երևույթները: Տեկտոնիկ ինտենսիվ շարժումների, արևի, քամու և ջրի ազդեցությունների հետևանքով երկիրը վերածվել է առանձին լեռնազանգվածների ու միջլեռնային գոգավորությունների մի բարդ համակարգի:

Երկրակեղևի նորագույն տեկտոնական շարժումների հետևանքով երկիրը վերածվել է ծալքաբեկորավոր կառույցի: Այս շարժումներն ուղեկցվել են հզոր հրաբխականությանը: Ինչպես ամբողջ լեռնաշխարհն, այնպես էլ ՀՀ տարածքը հրաբխականության դասական երկիր է: Չորրորդական ժամանակաշրջանում՝ վերջին մոտ մեկ միլիոն տարվա ընթացքում, տեղի են ունեցել նաև կլիմայական պայմանների փոփոխություններ, առկա են սառցապատման 2 փուլեր, որոնց հետքերը պահպանվել են 3000 մ-ից բարձր գրեթե բոլոր լեռներում:

ՀՀ-ն լեռնային երկիր է: Տարածքի միջին բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1850 մ: Համեմատաբար հարթ մակերևույթ ունեցող տարածությունները կազմում են հանրապետության տարածքի 20%-ը միայն, մինչդեռ զառիթափ լանջերը և դարավիուլերը՝ ավելի քան 40%-ը:

Ռելիեֆի տարբեր ձևերի զբաղեցրած տարածքն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության

Ռելիեֆի ձևերը	Մինչև 1000 մ	1000 – 1500 մ	1500 – 2000 մ	2500 մ-ից բարձր	Ընդհանուր տարածքը
Հարթություններ, սարահարթեր և սարավանդներ	1.56	1.24	2.25	0.16	5.24
	5.2	4.2	7.6	0.5	17.6
Մեղմաթեք և միջին թեքության լանջեր	0.65	2.20	6.33	2.25	11.43
	2.2	7.4	21.3	7.6	38.4
Չառիթափ լանջեր և դարավիուլեր	0.72	1.98	6.67	2.39	11.76
	2.4	6.7	22.4	8.0	39.5

* Համարիչը ցույց է տալիս տարածքը հազ քառ.կմ-ներով, հայտարարը՝ հանրապետության տարածքի որ տոկոսն է կազմում:

Ամենացածր կետը հյուսիսում է, Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանում՝ 375 մ, ամենաբարձր կետն Արագածի հյուսիսային գագաթն է՝ 4095 մ: Հարաբերական բարձրությունները տատանվում են 1500-2000 մ-ից մինչև 3700 մ: Բարձրությունների նման պատկերը կարևոր գործոն է կլիմայի, հողաբուսական ծածկույթի և լանդշաֆտների բարձրունքային գոտիականության ձևավորման գործոն:

ՀՀ տարածքում առանձնացնում են միմյանցից տարբերվող ծագումնաբանական 4 հատվածներ:

1. Փոքր Կովկասի ծալքաբեկորավոր լեռների և միջլեռնային հովիտների հատված: Այն զբաղեցնում է տարածքի հյուսիս-արևելյան մասը, հիմնականում Կուր գետի ավազանում՝ Վիրահայոց, Բազումի, Փամբակի, Գուգարաց, Արեգունի, Սևանի լեռնաշղթաները և նրանց միջև եղած գոգավորություններն ու հովիտները: Աչքի է ընկնում էրոզիոն մասնատվածությամբ: Առավելագույն բարձրությունը՝ Թեժլեռ, 3101 մ:

2. Հրաբխային ծածկույթների հատված: Աշոցքի, Արագածի, Գեղամա, Վարդենիսի, Սյունիքի զանգվածներ ու դրանց բոլորող բազմաթիվ սարավանդներ: Սրանք ծածկված են երիտասարդ՝ վերին պլիոցենի և չորրորդական լավաներով: Ռելիեֆի ձևերը մեղմ են, էրոզիոն մասնատվածությունը թույլ է, համեմատաբար մեծ ծախսով գետերը ստեղծել են խոր կիրճեր և խնձահովիտներ /կանյոններ/: Առավելագույն բարձրությունը՝ Արագած լեռը, 4095 մ:

3. Մերձարաքսյան ծալքաբեկորավոր լեռների համակարգ՝ Արաքսի ձախ ափի Ուրծ-Երանոսյան, Թեքսարի լեռները, Վայքի լեռնաշղթան և Ջանգեզուրի լեռնաշղթան՝ իր բազուկներով:

Հայաստանի լեռնահամակարգը Փոքր Կովկասի /Անտիկովկասի/ հարավ-արևելյան մասն է, տարբեր ուղղություններով ձգվող լեռնաշղթաների համակարգ, որոնք իրենց ծագմամբ ու բնույթով զանազանակերպ են և միակցվելով իրար կազմում են մի շարք ֆիզիկաաշխարհագրական շրջաններ՝

Վիրահայոց լեռներ /Ման Սոմխեթի լեռներ/, ձգվում է Թրիալեթի լեռնաշղթայից մինչև Աղստև գետը, ծածկված են փարթան անտառներով,

Գանձակի լեռներ, ձգվում է Աղստև և Թարթառ գետերի միջև: Արեգունի լեռների հետ կազմում է Գետիկի /ճամբարակի/ հովիտը,

Խոնավ լեռներ /Կեչուտի լեռներ/, ձգվում է մինչև Բազումի լեռները՝ մինչև Դիլիջանի մոտակայքը: Հրաբխային ծագում ունեցող այս լեռների հարավային հատվածը տարվա ընթացքում առավելապես պատված է լինում մառախուղով և կոչվում են Ման Սթին լեռներ: Բազումի և Վիրահայոց լեռների հետ առաջացնում է Լոռու բարձրավանդակը /Տաշրատափ/,

Գեղամա լեռներ, ձգվում է Հրազդանի ակունքներից մինչև Գնդասար: Վարդենիսի, Արեգունու, Սևանի և Ջանգեզուրի լեռնաշղթաների հետ ստեղծել է 4760 քառ. կմ մակերեսով Սևանի ավազանը,

Ջանգեզուրի /Սյունաց/ լեռներ, ձգվում է Վարդենիսի լեռնաշղթայից մինչև Արաքսի կիրճը: Ամենաբարձր գագաթը Կապուջուղն է /3906 մ/, Արագածից հետո բարձրությամբ երկրորդ լեռը,

Արագած /4095 մ/, Հայաստանի ամենաբարձր լեռը, որի քառագագաթ խառնարանին կից ցրված բազմաթիվ լճակներից ամենամեծը Սև լիճն է /3225 մ/:

4. Արարատյան դաշտ: Ընդգրկում է Արարատյան գոգավորության հատակային հատվածը՝ Ախուրյան-Արաքս գետախառնուրդից մինչև Մեղրու կիրճը՝ մոտ 200 կմ: Այն տեկտոնական իջեցում է, ծածկված է լճաալյուվիալ ու պրոլյուվիալ նստվածքներով: Միջին բարձրությունը 800-825 մ է:

Հանրապետության կլիմայական պայմանների ձևավորման մեջ ամենակարևոր պայմաններից են որոշակիորեն բաղդատված բարձրադիր տեղադրությունը, Սև և Կասպից ծովերի, Մեծ Կովկասի, Մերձկասպյան տափաստանի, Իրանական սարահարթի

հարևանությունը: Այն առաջացրել է խիստ արտահայտված ուղղահայաց գոտիականություն՝ մերձարևադարձայինից մինչև բարձրադիր լեռնային: Արարատյան դաշտի չոր և շոգ ամառներին հաջորդում են լեռնային գոտիների խստաշունչ ու դաժան ձմեռները:

Հայաստանը դասվում է ջրասակավ տարածքների շարքին: Միակ խոշոր ջրաղբյուրը Սևանա լիճն է, աշխարհի ամենաբարձր և ամենամեծ լեռնային լճերից մեկը: Գետերը հիմնականում լեռնային են, ձնահալքոցային սնմամբ, արագահոս, սակավ ջրառատ: Լեռնաշխարհը հարուստ է բազմաթիվ հանքային առողջարարական ջրաղբյուրներով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ

(ԼԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ)

